

տող բոլոր գործաւորները կը հիւանդանան: Գործաւորին կազմը, կուրծքի առողջական վիճակը, ապրելակերպը, գործատեղին (քիւղ, քաղաք), աշխատութեան տևողութիւնը, փոշիին որակը և քանակը և այլն. մեծ դեր կը խաղան թոքային և այլ հիւանդութիւններու ծագման մէջ և լաւ առողջապահութեամբ մը կարելի է կանխել կամ սահմանափակել փոշիին գործաւորին առողջութեան վրայ ունեցած վնասակար հետևանքները:

ԲԺ. 1. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ



ԾՈՎԱԿՆՏԻ ԵՒ ԱՅՐՈՒՑՔԻ ԴԵՄ

Երկար ատեն վաճառականական նաւերու և մարտաներո՛ւ վրայ մեքենավարութիւն ըրած ըլլալով, տեսած եմ և փորձով դիտեմ թէ հետեւեալ միջոցները օգտակար են անոնց որոնց «ծովը կը բռնէ»:

1. — Նաւ մտնելէ անմիջապէս առաջ, դաւաթ մը ծովու ջուր խմել, որ օգտակար է նաև սիրտ խառնուուքը կտրելու համար:

2. — Նաւերու խցիկներուն մէջ չմնալ, այլ վերնայարկը ելլել և մաքուր օդ ծծել: Պէտք է կենալ նաւին մէջտեղը և ոչ թէ յետսամամասին կամ յառաջամասին վրայ:

3. — Անօթի չմնալ, այլ լաւ ուտել. երբ ստամոքսը սլարապ ըլլայ, սիրտը ալ աւելի կը խառնուի:

4. — Կոնակի վրայ պառկիլ և ոչ թէ քովնտի ու գլուխը կախ:

5. — Ծնչառութիւնը յարմարցնելու նաւու ելևէջին, այսինքն չնչել նաւուն իջած ատեն և արտաշնչել բարձրացած պահուն:

6. — Փոխողներուն վրայ չնայիլ:

Այրուցքի դէմ ալ մեր հնոցպանը, էօմէր աղան, լաւ դեղ մը ունէր. օճառի մանրուքներ կը լուծէր քիչ մը տաք ջուրի մէջ և իր այրուցքներուն վրայ կը քսէր: Եւ կամ այդ նպատակով կը յանձնարարէր հաւկիթի և ձիթախլի խառնուրդ մը, որու հրաշալի արդիւնքը անձնապէս փորձած եմ:

Յ. ՊԻՒՂՊԻՒԼԵԱՆ

ՈՄԲ. — Չենք դիտեր թէ որքան ազդեցիկ են ծովախտի դէմ Պ. Յ. Պ. ի յանձնարարած միջոցները, մանաւանդ ծովու ջուր խմելը: Սակայն այրուցքի դէմ էօմէր աղային դեղը նոր չէ և մէկ տեսակն է իւղային պատրաստութիւններու, որոնք հինէն ի վեր կը գործածուին թէ ժողովուրդին և թէ բժիշկներուն կողմէ: Հաւկիթի այս սղութեան, կարելի է բաւականանալ միայն պարզ ձէթով կամ ձիթախլի և կրաջուրի խառնուրդով (liniment oléo-calcaire):